ՆՈՐ-ԴԱՐ

№ 76 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 17 Մայիսի 1888 Երեքշաբթի 17 Մայիսի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 76

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., հատով 5 կոպեկ։ Բաժանորդ գրվում են Թիֆլիսում մխիթարյան վանքում։

Խմբագրության հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» или Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարության բաժին 2 կ., բնկալների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդ.—Բագուի հայ հասարակութիւնը հուզող խնդրի առթիւ։
Քրոնիկոն.—Լուրեր։
Քաղաքական.—Լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրները։
Յայտարարութիւններ։
Բանասիրական.— Աննա Սարոյեան։

Թիֆլիս, 16 մայիսի 1888

ԲԱԳՈՒԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՅՈՒԶՈՂ ԽՆԴՐԻ ԱՌԹԻՒ

Մի մարդու քահանայ ձեռնադրելու խնդիրը լուզում և վրդովում է այսօր Բագուի հայ հասարակութիւնը։ Այդ խնդրովն է զբաղուած հիմայ Բագուն։ Թեմի առաջնորդի Բագու գնալովը ոչ թէ չէ որոշվում, այլ սուր ընթացք է ստացել։

Այդ մասին գրեթէ ամեն օր խմբագրութիւնս բազմաթիւ նամակներ է ստանում Բագուից։ Զարմանալի չէ, որ մի ըստ ինքեան հեշտ լուծելու խնդիր, ինչպիսին է մի քահանայացուի խընդիրը, Բագուում այնքան խռովութիւնների պատճառ է դառնում և այնքան բողոքների առիթ տալիս և խռովում հասարակութեան միտքը։ Այստեղ էլ կատարվում է ամենահասարակ ճշմարտութիւնը. ըստինքեան մի չնչին և դիւրըմբռնելի խնդիր էլ կարող չէ գոհացուցիչ որոշումն ստանալ, երբ միմեանց դէմ կանգնած կողմերը գիտութեամբ միմեանց չեն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՆԱ ՍԱՐՈՅԵԱՆ *)

—

ՆԱՄԱԿ Դ.

Թիֆլիս, հոկտեմբերի 11-ին 1880.

Սիրելի Հռիփսիմէ,

Նախորդ նամակովս խոստացել էի քեզ տեղեկութիւն տալ մեր ընտանիքից և ահա կատարում եմ խոստումը։

Նախ պիտի ասեմ, որ Գրիգորը հիւանդ է. սաստիկ հազում է։ Այս հիւնդերորդ օրն է, նոր գիմնազիոն չէ գընում. բժիշկները խորհուրդ են տալիս առ ժամանակ ձեռք վերցնելու պարապմունքներից։ Ես սաստիկ երկիւղ եմ կրում, որ նրա հիւանդութիւնը Թոքախտ լինի, մանաւանդ որ նա շատ քնքոյշ, նիհար կազմուածք ունի։ Դու գիտես, թէ ինչպէս ես սիրում եմ եղբայրներիս, առաւելապէս նրան, որ, այս վերջին ժամանակներս մանաւանդ, ինձ համար թէ եղբայր է՝ բառիս բուն նշանակութեամբ և թէ

*) Տես «Նոր-Դար» № 75

ուզում հասկանալ։ Քահանան պէտք է ձեռնադրուի մի որոշ հօտի վերայ։ Այն անձը, որ ձգտում է Բագուի հայ հասարակութեան համար քահանայ ձեռնադրուել, այդ հասարակութիւնը իւր ընտրեալներից, իւր առաջնորդի բերանով յայտնում է, որ չէ կամենում նրան։ Ինչ է մնում անելու թեմի առաջնորդին այդպիսի դէպքում, եթէ քահանայանալ ցանկացող անձը մինչև անգամ բարեմասնութիւններով օժտուած լինի և պատրաստ քահանայական սըրբազան կոչման համար։

Թեմի առաջնորդին մնում է հետևելու Հայաստանեայց ս. եկեղեցու կանոններին և չձեռնադրելու յիշեալ անձին քահանայ, յարգելով հասարակութեան կամքը և միշտ աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ ժողովուրդը չէ քահանայի համար, այլ քահանան է գոյութիւն ստանում ժողովրդի համար։

Բայց տեսէք թէ ինչ կայ. մեր այժմեան կեանքի մի հետաքրքիր կողմն էլ այն է, որ ոմն տեղից վեր է կենում, ուզում է քահանայ դառնալ, պատճառաբանելով թէ կամենում է եկեղեցու միջոցով ծառայել ազգին, հասարակութեան... շատ գեղեցիկ։ Բայց հասարակութեան իւրաքանչիւր անդամ կարող է օգտուէտ լինել նոյն հասարակութեան զանազան ճանապարհներով, տարբեր միջոցներով և չափով։ Սկսենք նրանից, որ մի որևէ հասարակութեան անդամ արդէն բացառական կերպով

օգտաւէտ է լինում այդ հասարակութեան, եթէ վնաս չէ տալիս նրան։ Հասարակութեանը օգտաւէտ լինելու այդ առաջին և ստոր աստիճանն է։ Երկրորդ աստիճանն այն է, որ հասարակութեան անդամը ինքն իրեն օգտաւէտ է լինում, այդպիսով նա իրրև բեռն չէ ծանրանում հասարակութեան վերայ։

Սա էլ մի ծառայութիւն է։

Այս երկու աստիճանից դէնը հասարակութեան անդամը կարող է օգտաւէտ լինել հասարակութեան դրականապէս իւր մասնաւոր հոգեկան և նիւթական կարողութեան համեմատ։

Մթթէ հասարակութեան իւրաքանչիւր անդամ նոյն հասարակութեան օգտաւէտ կարող է լինել միմիայն քահանայութեան պաշտօնով, երբ այդ անդամը ոչ ընդունակութիւն ունի այդ պաշտօնի համար, ոչ կոչումն և ոչ էլ պատրաստութիւն։ Մթթէ միևնոյն անձը ուրիշ կերպ, իւր միջոցների համեմատ, գործելով, կարող չէր օգտաւէտ լինել հասարակութեան, կառավարել մարդկանց։ Մթթէ ամեն մարդ կոչուած է կառավարելու մարդկանց ուղեղը և սիրտը, երբ նա կարող էր գուցէ օգտաւէտ լինել հասարակութեան, մարդկանց, կառավարելով նրանց—ոտքերը։ Կոշկակարութիւնն ըստ ինքեան մի պատուական արհեստ է. իւր գործին հմուտ կոշկակարը՝ մարդկանց ոտքերի համար յարմար և լաւ կօշիկներ պատրաստելով, իրովսանն օգտաւէտ է հանդիսանում հասարակութեան։ Ուստի ինչ հարկ կայ թողնել կօշկակարութիւնը, որով մարդ կարող էր և ընդունակ էր օգտաւէտ լինել հասարակութեան, կառավարելով մարդկանց ոտքերը, և ձգտել աւելի վեր, աւելի ուրիշ բարձր ընդունակութիւններ պահանջող արհեստ, պաշտօն, գործ, և օգտաւէտ լինելու տեղ վնասակար հանդիսանալ հասարակութեան։

Բայց ինչ անես, որ մեր հասարակութեան դժբաղդութիւնն այն է, որ շատերը կարծում են, թէ կօշկակարութեան համար, օրինակ, աշխատանք, արհեստի մէջ հըմտութիւն է հարկաւոր, իսկ բարձրը պաշտօններում, օրինակ, քահանայութեան համար ոչինչ հարկաւոր չէ. բաւական է միմիայն քահանայ դառնալու բարի ցանկութիւնը։ Դրանից է, որ մարդիկ, որոնք հազիւ կարող են կառավարել մարդկանց ոտքերը, յանդգնութիւն ունին կառավարել ձգտելու մարդկանց ուղեղը...։

Այսպիսով այդ տեսակ մարդիկ ոտքերից հեռանալով և ուղեղին չկարողանալով մօտենալ, ոչ մէկին են կարողանում ծառայել և ոչ միւսին, և իրրև հասարակութեան վնասակար անդամներ մնում են ճանապարհի կէսում—ստամոքսի մօտ։ Դժբաղդաբար մեր կեանքն, ամենասուրբ խնդիրներն անգամ ստամոքսից դէնը չեն գնում և այդտեղից են շատ անգամ իրենց վճիռը ստանում։

Բագուի հայ հասարակութիւնը

յուզող խնդիրը նոյնպէս դէմ է ընկել ստամոքսի խնդրին և տեղից չէ շարժվում։

Ցոյս ունինք, որ հասարակութեան արդարացի բողոքը առանց հետևանքի չմնայ և՛ եկեղեցու և՛ հասարակութեան շահերը չզոհուին անհատի, մասնաւորի շահերին։

ՔՐՈՆԻԿՈՆ

Կիրակի, մայիսի 15-ին, Նորին կայսերական Մեծութիւն թագաւոր կայսրը Ալէքսանդր Ալէքսանդրովչի և թագուհի—կայսրուհի Մարիա Ֆեօդօրովնայի թագադրութեան օրը վանքի աւագ եկեղեցում և Սիոնի տաճարում կատարուեցան հանդիսաւոր պատարագ և մաղթանք։ Քաղաքը զարդարած էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսաւորուած էր։ Այդ օրը առաւօտից մինչև կէս օր եղանակը քաղցր էր և խաղաղ, բայց երեկոյեան սկսաւ տիզատարափ անձրև, որ մերթ ընդ մերթ ընդմիջուելով, տևեց մինչև միւս օր առաւօտ։

—

Կիրակի, մայիսի 15-ին, վանքի աւագ եկեղեցում թեմիս ս. Առաջնորդը երկու հոգու սարկաւագ ձեռնադրեց. մէկը՝ սուրամեցի Մելքիսեդեկ Տէր Պետրոսեանց, իսկ միւսը՝ Ղազդոնի գիւղացի (Ղազախի գաւառ) Յովհաննէս Տէր-Յովհաննէսեան։

—

ԲԱԳՈՒԻՑ.—Մայիսի 12-ի երեկոյեան ժամը 5-ին քաղաքիս հայ հասարակութիւնը խումբ-խումբ ժողովուելով ս. Լուսաւորիչ աւագ եկեղեցու բակը՝ կամենում էր իւր ցաւերը յայտնել Թեմիս ս. Առաջնորդին։ Ժողովականներից մի պատգամաւոր, ուսումնարան-

---

մեզ ոչինչ երկիւղ չպատճառելու համար միայն՝ այդ մեզանից ծածկելիս լինելը,—ես այդ խոկոյն կարող էի հասկանալ, տեսնել, բայց ես գիտեմ (և սիրտս էլ այդ նախազուշակում է), որ նրա վիշտը բոլորովին ուրիշ բանի համար է։ Իսկ թէ ինչ բանի համար,—այդտեղ ես արդէն ոչինչ չեմ կարողանում հասկանալ և ոչ ենթադրել։ Մայրս սաստիկ անհանգիստ է նրա համար. ասում է, որ գիշերները նա հանգստութիւն չունի, իսկ երբեմն՝ քնած ժամանակ՝ կարծես սաստիկ վախեցած, ասում է, յանկարծ ազատակում է և վեր է թռչում. երբեմն էլ երազում, ասում է, ուղղակի լաց է լինում...

Հաւատացիր ես մնացել եմ սաստիկ տարակուսած։ Ինչ է նշանակում այս։

Քո Աննա Սարոյեան։

—

ՆԱՄԱԿ Ե.

Թիֆլիս, հոկտեմբերի 29-ին 1880.

Սիրելի Հռիփսիմէ,

Այս անգամ դարձեալ հօրս մասին պէտք է գրեմ, որովհետև իմ բոլոր մտածութեան առարկան գրեթէ միայն նորա վերայ է դարձել։ Ես մտախոհութեամբ նայեցի նրա երեսին։ Ինչպէս շուտ և հեշտութեամբ կարողացաւ ազատուել ամեն տեսակ բացատրութիւնից։ Այնուհետև ամեն անգամ ես նկատում եմ, որ նա ամեն կերպ աշխատում է խոյս տալ ինձնից, իսկ երբ այդ չէ աջողվում, սկսում է դարձեալ իւր կատակները և, զարմանալի է, չնայելով որ այդ կատակները նա ակամայից է անում (ես այդ շատ լաւ նկատում եմ), բայց նրանք երբէք անհամ չեն դուրս գալիս և միշտ ունենում են իրենց ազդեցութիւնը. գոնէ ով այդ ժամանակ նայում է նրան (մինչև անգամ ես), չէ կարողանում զսպել իւր ծիծաղը։ Սակայն նա ի զուր է աշխատում ծածկել ինձնից իւր վիշտը. բայց որ մի վիշտ—և այն ծանր վիշտ—կրծում է նրա սիրտը և մեծ մտատանջութիւն է պատճառում նրան,—այդ ես գիտեմ, այդ ես պարզ կերպով տեսնում եմ։ Ի հարկէ, նրա վիշտը Գրիգորի համար կարող չէ լինել, որովհետև Գրիգորն այնքան էլ հիւանդ չէ, որ համար կարելի լինէր այնպէս մտատանջուել և, բացի դրանից, եթէ նրա վիշտը հենց դրա համար էլ լինէր և

Նկարագրեցին եկեղեցուն եւ գյուղը, ապա՝ ներկաները։

—Ինչ գեղեցիկ տեղ է, ինչ հրաշալի օդ է շնչում այստեղ, ինչ ազատ է ամեն ինչ, ինչ հանգիստ է ամեն ինչ,— ասաց Ռուբենը։

—Ես ինձ այստեղ կարող եմ երջանիկ զգալ,— ասաց Վարդանը։

—Ես էլ,— ասաց Ռուբենը։

—Ես էլ,— ասաց Ալեքսանդրը։

—Ես էլ,— ասաց Գրիգոր

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ամերիկահայ ուսանողներ Ա. Ս. Հնչակեան եւ Ա. Ս. Ռուբինեան Պոսթընի Տեքսթըր համալսարանէն ամառնային արձակուրդի համար կուգան Եւրոպա եւ Պոլիս։ Անոնք Պոլսոյ մէջ պիտի մնան մինչեւ Սեպտեմբեր 15։ Ուսանողներ կրնան դիմել անոնց հետ Պոլսոյ Ամերիկեան Վանքին մէջ։

գործառնութիւնները դադարում են նոյն թուից։

Գիւղական բանկի Սիմբիրեան ճիւղը իւր գործառնութիւնները սկսում է Նիժեգօրօդեան նահանգումն էլ։

ՊԱՐԻԶ.— Սէնատն ընդունեց զինուորական օրինագծի 40 յօդուածը, որ զինուորագրական ծառայութիւնը որոշում է լինել 25 տարի, այսինքն, 3 տարի գործող բանակի մէջ, 6½ տարի գործող բանակի պահեստի մէջ, 6 տարի տերիտօրիալ բանակի և 9½ տարի էլ տերիտօրիալ բանակի պահեստի մէջ։

Ֆրանսիական բանկը յայտարարում է, որ հինգ հարիւր ֆրանկանոց թղթադրամները պիտի բարձուին գործածութիւնից։

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ. — Անցագրային ճնշումներից յետոյ պիտի գործադրեն ֆրանսիահպատակների շատերի արտաքսումը Էլզաս-Լոթարինգիայից։

ՎԵՆՆԱ.—Հաստատում են, որ ռուսական հացահատիկները տուրքի չլինի ենթարկուի Գերմանիայում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 Մայիսի.—Նոցին Կայսերական Մեծութիւնների թագադրութեան օրը, Իսակիեվսկի տաճարում բարձրագոյն Պալատի բարձր աստիճանաւորների և գեներալիտէի ներկայութեամբ կատարուեց հանդիսաւոր ժամասացութիւն։ Բարձրագոյն Պալատում ընդունելութիւն չեղաւ։

Ներքին գործերի մինիստրը, ելնելով մի քանի ժամանակով ուղևորեց Պետերբուրգից՝ իւր վրայ թողնելով մինիստրութեան աւելի նշանաւոր գործերի վարչութեան և ուղղութիւն տալու ձեռներէցութիւնը։

«Наблюдатель» ամսագրին երրորդ նախագուշակութիւն է տրուած 6 ամսուայ դադարումով, որ նա, չնայելով եղած երկու նախազգուշակութիւններին, շատ յօդուածներում շարունակում է վրնասակար ուղղութիւն ունենալ, որ մանաւանդ աւելի արտայայտվում է Ֆօֆանովի՝ «Таинство Любви» ոտանաւորի մէջ, որ նշանաւոր է իւր վրդովիչ սրբապղծութեամբ։

Ներքին գործերի մինիստրը գրաֆ Իգնատիեվին հաստատեց Պետերբուրգի սլավեանական բարեգործական ընկերութեան նախագահ։

«Нов. Вр.»-ն հաղորդում է, որ գրաֆ Պալէնի հրեական յանձնաժողովը իւր աշխատութիւնները վերջացնում է այս ամսում՝ առանց որ և է դրական հետևանքի հասնելու։

ՀԷՅԼՍԻՆԳՖՕՐՍ.—Սէյմը որոշեց, որ ֆինլանդական հեծելազօրը պէտք է զետեղուած լինի Ֆինլանդիայում։

ՊԷՇՏ.—Տիսզան պատգամաւորների ժողովում յայտարարեց, որ ունգարական կառավարութիւնը մասնաւոր անձերին չէ արգելում մասնակցելու Պարիզի ցուցահանդեսին, բայց կարծում է, որ նրանք խոհեմութեամբ վարուած կլինէին, եթէ ձեռնպահ մնային դրանից, որովհետև, Ֆրանսիայում տիրապետող տրամադրութեան պատճառով, կարող են անհամութիւններ ծագել և մինչև իսկ վերաւորանքներ հասնել ունգարական դրօշին։

ԲԵՐԼԻՆ. — Կիսապաշտօնական «Post»-ը ասում է, որ ռուսական հացահատիկների վրայ դրուելիք հարկի մասին հրատարակած յօդուածները սխալ են բացատրուել՝ — լրագիրն ամենևին չէ ցանկացել ասել, որ այդպիսի միջոցների ձեռնարկելու են շուտով և մինչև անգամ կարծում է, որ ներկայումս այդ ամենևին էլ աչքի առաջ չունին։

ԲՐԻՒՍԵԼ.—«Nord» թերթը հաղորդում է, որ Սմբղանդի երկաթուղու բացումը կամրացնէ Ռուսիայի դիրքն արևմուտքում՝— Անգլիան պէտք է այժմ հասկանայ, իւր այդ բանին ընդդիմադրելու համար իւր գործ դրած չանքերի իզուր լինելը և, գուցէ, իւր հնդկական կալուածների ապահովութեան գրաւականը կը գտնէ Ռուսիայի հետ անկեղծ համաձայնութիւն հաստատելու մէջ, մանաւանդ որ Ռուսիան լի է խաղաղասիրական ձգտումներով։

ՍՄԲՂԱՆԴ, 15 Մայիսի.— Այսօր, Նոցին Կայսերական Մեծութեան սրբազան թագադրութեան տարեդարձի օրն, Միջին-Ասիայի սերտը Սմբղանդը երկաթուղու գծով միացած է Կասպից ծովի հետ։ Առաջին գնացքը գեներալ Անենկովի և իւր օգնականների, ուսումնական ընկերութիւնների պատգամաւորների, մամուլի ներկայացուցիչների, Բագու քաղաքի և նաւթարդիւնաբերողների պատգամաւորների, արտասահմանից, Եւրոպական Ռուսիայից, Թուրքեստանից և Անդրկասպեան երկիրներից եկած հիւրերի մեծ բազմութեան հետ դիմաւորուեց Թուրքեստանի կառավարիչ գեներալ-ադիւտանտ Րօզենբախի, Ռուիթարալի Էմիր զեսպանութեան, տեղական վարչական մարմինների և ռուս և բնիկ ժողովրդի բազմութեան կողմից թբնդանօթների որոտումով։ Առաջին գնացքը կանգ առաւ Թամերլանի շիրիմի մօտ։ Այնուհետև գեներալ Րօզենբախի մօտ նախաճաշ եղաւ, որի միջոցին գեներալ Րօզենբախի առաջարկած Թագաւոր Կայսրի կենաց բաժակն ընդունուեց ընդհանուր միաձայն «ուրայով»։ Նախաճաշի միջոցին Կայսերական աշխարհազրական ընկերութեան նախագահ, սենատոր Սէմենովը մի ճառ խօսեց գեներալ Անենկովի ծառայութիւնների մասին։ Փառաւոր հեղ կանաչի մէջ թաղուած քաղաքը զարդարուած է դրօշակներով։ Երեկոյեան պէտք է լուսաւորութիւն լինի, որի միջոցին պիտի լուսաւորուին հնուքեան բոլոր յուշարձանները և Թամերլանի շիրիմը։

ՎԵՆՆԱ.—«Presse»-ն ասում է իւր առաջնորդողում, որ Ռուսիան կատարեալ իրաւունք ունի հղարտանալու Անդրկասպեան երկաթուղու գծի վերջացնելով, իսկ Անգլիան ստիպուած է այնքան էլ խիստ չլարել իւր ուղեղը եւրոպական խնդրում։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

13 Մայիսի։

Լօնդօն 119,50 ը., 118,80 ը., 119,35 ը.
Համբուրգ 58,65 58,60 ը.,
Պարիզ 47,20 ը., 47,15 ը.
Պօլուիմպերիալ . 9 ը. 55 կ. սակ.
Մաքս. կուպօն 190 ը. 50 կ. սակ.
Աբծաթ . . . . 1 ը. 40 կ. սակ.
Բօրսային պրս. 6⅛ և 7⅛%
Պետակ. բանկի 5%
1-ին շրջանի. . 99 ը. 37 կ. սակ.
2-րդ . . . . . 98 ը. 50 կ. սակ.
3-րդ . . . . . 98 ը. 50 կ. գն.
4-րդ . . . . . 98 ը. 62 կ. գն.
5-րդ . . . . . 98 ը. 50 կ. գն.
6-րդ . . . . . —
Վերջին 4% փոխառութիւնը . . 82 ը. 62 կ. սակ.
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսերը,
1-ին շրջանի . 98 ը. 87 կ. սակ.
2-րդ . . . . . 98 ը. 87 կ. սակ.
3-րդ . . . . . 99 ը. — կ. սակ.
Առաջին 5% նեղքին փոխառութեան տոմսերը . . . 272 ը. 50 կ. սակ.
2-րդ . . . . . 243 ը. 75 կ. սակ.
5½% ըչնաեր . 103 ը. 75 կ. ծախ.
Ոսկէ ըչնա . . 200 ը. — կ. գն.
Թելֆ. քաղ. վարկի ընկեր.
օրվեց. . . . ը. — կ. ծ.

Պետերբուրգի բօրսային տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր-Հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՏՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Իմ հրատարակութիւնով լոյս տեսաւ պարոն Վասակ Մադաթեանցի (Նեազմի) երկրորդ աշխատութիւնը «Մադօյի կտակը» անունով վօդեվիլը. գինն է 25 կոպ. պահեստը գտանվում է ինձ մօտ. դիմել այս հասցէով.

Въ Ахалцыхъ, учителю Арм. училища Нерсесу Симеонянцу. Գումարով գնողներին զիջումն կը լինի։

Ն. Սիմէօնեանց

3—2

ԴՕԿ. ՊՕՊՊԻ Անատէրենեան բերան ողողելու հեղուկն, որ պահպանում է ատամն առողջ և գեղեցիկ. միևնոյն ժամանակ գործ դնելով ատամնային փոշին։

ԴՕԿ. ՊՕՊՊԻ Բուսական օճառը կաշուի ամեն տեսակ հիւանդութիւնների և լուացուելու համար շատ լաւ է։

Կարելի է ստանալ Ռուսիայի և արտասահմանի բոլոր հոտաւէտ նիւթերի, դեղատնային և գալանտերեան ապրանքների վաճառանոցներում։ Դեպօն՝ Թիֆլիսում, Դեղատնային ապրանքների վաճառման ովկասեան ընկերութեան՝ և Բագուում նրա բաժանման մէջ, Կ Պօպով և Լանկօ.

(Մ.) 25—11

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երթևեկութիւն «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաթում, պօստային. 8 ժ. 49 վ. առ.
Բագու, ,, 10 ժ. 46 վ. եր.
Սուրամ, ապ. մար. գն. 3 ժ. 21 վ. ց.
Աղստաֆա, խառն գն. 8 ժ. 20 վ. առ.

Գալիս է

Բաթումից, պօստ. 10 ժ. 15 վ. եր.
Բագուից, ,, 8 ժ. 6 վ. առ.
Սուրամից, ապ. մարդ. 8 ժ. 24 վ. առ.
Աղստաֆայից, խ. գն. 8 ժ. 18 վ. եր.

ՊՕՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ

Երթևեկութիւնը պատերազմական-վիրական Հանապարհով

1887 Թ. նոյեմ. 15-ից—1888 Թ. մայիսի 15-ը։

Թիֆլիսից դուրս է գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող կաբէտը առաւօտեան ժամը 8-ին, Մէթէխի կայարանում գիշերելով. հասնում է Վլադիկաւկազ միւս օրը երեկոյեան ժամը 8-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը դուրս է գալիս ցերեկուայ ժամը 4-ին, առանց գիշերելու, միւս օրը, երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկաւկազ։

Վլադիկաւկազից

Հինգ հոգու տեղ ունեցող կաբէտը դուրս է գալիս առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մէթէխի կայարանում և միւս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում է Թիֆլիս։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը դուրս է գալիս ցերեկը, ժամը 6½-ին, առանց գիշերելու, միւս օրը երեկոյեան 9 ժ. 50 վ.-ին հասնում է Թիֆլիս։

ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Նոգենաւային երեւելութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պօլսի միջև։

—

Բաթումից գնում է

Երեքշաբթիները. — կէս օրից յետոյ ժամը 4-ին, ուղիղ գծով, Սուխումի և Կերճի վրայով։

Հինգշաբթիները. — կէս օրուայ ժամը 4-ին, ուղիղ գծով, Նովոռօսիյսկի և Կերչի վերայով։

Շաբաթ օրերը. — երեկոյեան 8 ժամերին, շրջանառու ընթացքով, բոլոր նաւահանգիստները պատահելով։

Երկուշաբթիները. — երեկոյեան արտասահմանեան գնացքով Կ. Պօլիս։

Բաթում գալիս է

Երկուշաբթի — Առաւօտը, Օդեսայից, ուղիղ գծով՝ Կերճի և Սուխումի վրայով։

Չորեքշաբթի — Առաւօտը Օդեսայից, ուղիղ գծով.

Ուրբաթ. — Երեկոյեան, Օդեսայից, շրջանառու ընթացքով։

Շաբաթ օրերը. — Առաւօտը Կ. Պօլսից։

Փոթիից գնում է Բաթում

Երեքշաբթիները. — Առաւօտեան ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան ուղղագիծ շոգենաւին մխանալու։

Ուրբաթ՝ — Սուխումից շրջանառու նաւը նաւահանգիստ գալուց յետոյ։

Շաբաթ օրերը. — Առ. ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան և Բումֆլեան Անատոլեան շրջանառու շոգենաւին մխանալու։

Բաթումից գնում է Փոթի

Չորեքշաբթի և կիրակի օրերը. — Նաւի դուրս գնալու ժամը որոշում է Բաթումի նաւային գործակալութիւնը՝ նաւը Փոթիից գալուց յետոյ։

ՆԵՐՔԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ յունիս ամսի 1-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է Աձուրդ (աճանչ ընդհանուր) կալալով տալու 21 կրպակներ, որոնք գտնվում են դպրոցական հրապարակի վերայ, Վանաց եկեղեցու մօտ։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ Հոգաբարձութեան գիւանատան մէջ ամեն օր, բացի կիւրակէից և տօներից, առաւօտեան 10—12 ժամն։

Հոգաբարձու Թամամշեանց

Գործավար Բ. Հ. Ջալալեան

3—2

ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ
ԿԵԶՈՒ ԲԱԼԱՍԱՆ

Մէկ սրուակի գինն է 1 ր. 65 կոպէկ։

ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ ՕՊՊՕ ՊՕՄԱԴ ո և է կօլդ-կրէմից լաւ է մի ամանը 1 րուբլի.

ԴՕԿՏՕՐ ԼԷՆԳԻԼԻ ԲՕՆԶԱՆ ՕՃԱՌ

½ կտորը 50 կ., ¼ կտորը 35 կ.

Ուղարկելու ծախսը առանձին է հաշվում։ Վաճառվում է Ռուսիայի բոլոր դեղավաճառանոցներում և դեղատներում։ Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար է Վ. Ա. ՈՒՐԻԻԻ մօտ, Պետերբուրգում, Սարէմեաննայա, 4.

ԹԻՖԼԻՍՈՒՄ.—Դեղատնային ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան, և Գրիվնակի մօտ։ 46—26

ՌՅԻՒՀԿ ՄԻՍՏՔ ԸՐԸՄԲԷՆՑ

ՍԱԼԻՆՆԻՑ ԷՋՄԻԱՉԻՆ

Նկարագիր

ՈՒԽՏԱՒՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ

Քաղաքներ— փոխարկութիւններով

Գինն է 50 կոպէկ

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։ (Ա.) Ռ—15

ԿՕՆԴԻՏԵՐԻԱ ԵՒ ՀԱՑԱԳՈՐԾԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍ ԻՒԶԲԱՇԵԱՆԻ

Երեւանեան հրապարակի վերայ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Պատրաստի ունի ամեն օր նոր և թարմ ԿՕՆՖԵԿՏՆԵՐ ևս մրգերից և ամէն տօրնէ ու պօմադից հոչակաւոր պէսպիսներից ԿԱՐԿԱՆԴԱԿ, ՇԱՔԱՐԱՀԱՑ, ՅՈՒԿԱՆ, ՏՕՐՏ և ՔԱՂՑՐԱԻՆԻՔ ամեն պէսպիսի։

Նոյնպէս բազմատեսակ և բազմաձև ՀԱՑԵՐ ԵՒ ՊԱՔՍԻՄԱԹ.

Մեծ քանակութեամբ

ՐՕՆՐՕՆԵՐ ԸՐԿՂԻԿՆԵՐ

ՓԱՌԱՃԷՆ ԵՒ ԶԱՐԴԱՐՈՒՆ

Ընդունում է պատուէրները թէ Թիֆլիսում և թէ գաւառներից հեռագրով ամենաշտապով կերպով և կատարում է նրանց ԱՐԱԳ ԵՒ ՃՇԴՈՒԻ ԹԵՒՄԲ։

Այն օտարաքաղաքացիների համար, որոնք մեծ քանակութեամբ են պատուիրում, լինում է նշանաւոր զիջում։

Հասցէն՝ Тифлисъ, кондитерская И. Юзбашева.

50—44

Дозволено цензурою. Тифлисъ, 16-го Мая 1888 г.

Տպարան Լ. Գ. Կրամարէնկօլի

Типографія Л. Г. Крамаренко, Гол. пр., д. Читахова.